

ԵՂԻՇԵ ՋԱՐԵՆՑԻ
ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ստեղծագործական մեծ ու բարդ ճանապարհ է անցել Եղիշե Չարենցը՝ Բանաստեղծական իր բուն, անհանգիստ խառնվածքով նա երբեք չի գոհացել հայտնագործածով, անընդհատ որոնել է, խիզախել, նվաճել արվեստի նոր բարձունքներ։

Որոշումներով հարուստ շրջան էր բանաստեղծի կյանքում նաև 20-ական թվականները՝ Այս տարիներին էլ ահա վերաբերում են ստորև տպագրվող նամակները՝ գրած սովետահայ մշակույթի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկին՝ Մամիկոն Գևորգյանին (1879—1962), որի հետ Չարենցը նամակագրություն ուներ ոչ միայն որպես «նորը» հանդեսի պատասխանատու քարտուղարի, այլև մտերիմ բարեկամի։

Ժամանակին «նորը» էջերում են տպագրվել «Երկիր Նաիրի» վեպը, «Ասպետականը», «Ես և Իլլիշը», և Չարենցը, բնականաբար, իր նամակներում առիթ է ունեցել անդրադառնալու գրական-ստեղծագործական բազմաթիվ հարցերի։ Գրականության պատմաբանն, օրինակ, չի կարող անտարբերությամբ անցնել այն խոստովանության կողքով, որ արել է Չարենցը «Երկիր Նաիրի» վեպի առիթով 1924 թ. փետրվարի 8-ի նամակում։ Նույնը կարելի է ասել այդ համակում արտահայտված հետևյալ ցանկության վերաբերյալ, որ ժամանակին («Standart»-ի շրջան) համարյա թե ելակետային սկզբունք էր բանաստեղծի համար. «... կուզեի գնալ Եվրոպա, գնալ Ամերիկա, գոնե աշխարհով հաղորդակից լինել այն կուլտուրային, որի անունն է մաշինիզմ և տեխնիցիզմ, որի մասին այնքան անճարակ երեսայություններ է գրում «Մեք»-ը և այնքան հանճարեղ—Ուելսը։ Հայտնի է, որ նույն թվականի նոյեմբերին Չարենցը մեկնեց Եվրոպա ու երկարատև շրջագայությունից վերադարձավ արդեն ընդմիջտ հրաժարված «մաշինիզմից և տեխնիցիզմից»։

Նամակներում հեռաքրքիր տեղեկություններ կան բանաստեղծի կենսագրության, նրա երկերի ստեղծագործական պատմության վերաբերյալ։ Կարելի էր կարծել, օրինակ, որ «Ես և Իլլիշը» պոեմի առաջին տողերը, թերևս, կրճատել է «նորը» խմբագրությունը (պահպանվել է պոեմի ինքնագիրը, որտեղ այդ տողերը կան), սակայն 1923 թ. սեպտեմբերի 7-ի նամակից պարզվում է, որ այդ տողերը նպատակահարմար է գտել հանել հեղինակը։

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ուղղիչ տնից գրած գրությունները, որոնք լույս են սփռում Չարենցի՝ ուղղիչ տանն ունեցած գործունեության վրա, օգնում են հասկանալու «Երևանի ուղղիչ տնից» նոթերում նկարագրվող դեպքերն ու իրադարձությունները՝ իրենց հավաստիությամբ։

Ստորև տպագրվող նամակները «Հանդես»-ի խմբագրությանն է տրամադրել Մ. Գևորգյանի զուտոր Եկատերինա Գևորգյանը։

Ա. Գ. ԶԱԳԱՐՅԱՆ

Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր

№ 1

Սիրելի Մամիկոն Գևորգյան,

Ես արդեն հասել եմ Մոսկվա¹, բայց դրությունս դեռևս անորոշ է՝ սենյակ չունեմ, ֆինանսական հարցը անտանելի, մի խոսքով—WBAX. Բացի այս ամենը՝ սիրտս այս տարի չի կաշում Մոսկովին, սիրտս երազում է հեռու նախիրին, «Մեսոպոտամիան»², զուռնան... Մամիկոն Գևորգյան, նամակ գրեք, ինչ ուզում եք գրեցեք—միայն թե գրեցեք: Ի՞նչ է անում «Նորքը»³, ե՞րբ է լույս տեսնելու: Ի՞նչ նոր նյութեր են ստացվելու: Հետո՝ ի՞նչ դրական, ավելի լավ է ասել՝ զործնական պատասխան տվեց Աշոտը⁴ իմ կորեսպոնդենտ լինելու մասին: Ես այստեղ ասացի՝ Մոսկվային⁵, որ կարող եմ կորեսպոնդենտ լինել «Նորքին»⁶, բայց նա ասաց, որ դրա համար ես կարող եմ ոչ թե ոռճիկ ստանալ, այլ տողավարձ: Սա ինձ քիչ է մխիթարում, որովհետև «Նորքը» երեք ամիսը մի անգամ կարող է լույս տեսնել, իսկ ես չեմ կարող մի ստիպենդիայով երկու հոգով⁷ ապրել: Այնպես որ ինձ համար շատ մեծ նշանակություն կարող էր ունենալ ամսական 30—40 ռուբլի ստանալը, որի դիմացը ես կարող էի ոչ միայն թղթակցել տեղիս գրական կյանքի մասին, այլև ամեն տեսակի նյութեր տալ «Նորքին», ինչքան կամենաք: Միայն թե հարցը կանոնավոր դրվի, և ես կարողանամ այստեղի ներկայացուցիչ⁸ ամեն ամիս պարբերաբար ինձ հասանելի դնել ստանալ: Խոսեցեք այս մասին Աշոտի հետ, գուցե հնարավոր լինի այդ հարցը կարգադրել: Կրկնում եմ՝ ինձ պարբերաբար, եթե տալու լինեն որոշ ոռճիկ, ես այդ ոռճիկի դիմաց կարող եմ տալ ամեն տեսակի նյութեր, միայն թե հարկադրված չլինեմ սպասել մինչև №-ի լույս տեսնելը:

Այստեղ գրական համարյա թե ոչ մի նորություն: Էյնշտեյնի⁹ մասին լույս են տեսել մի քանի գրքեր, բայց թանկ են, հնարավորություն չունեմ դնելու: Ինչքան նայեցի՝ Շպենգլերի¹⁰ մասին նոր բան չկա: Ապագայում, եթե եղավ՝ կուղարկեմ: Դեռևս չեմ կարողացել շուրջս նայել, տեսնեմ: Եթե որոշ տեսակի գրքեր ուզում եք ստանալ—գրեցեք, ես Միսիայի¹¹ միջոցով կուղարկեմ:

Ես այստեղ տպարան եմ հանձնել բանաստեղծություններիս մի փոքր ժողովածուն¹² լույս կտեսնի ամսիս վերջերին. հենց որ լույս տեսավ—կուղարկեմ:

Սրա հետ ուղարկում եմ Ձեզ իմ ներկերի ժողովածուն, 2 հատոր¹³, կստանաք Հախումյանից¹⁴:

Խնդրում եմ, սիրելի Մամիկոն Գևորգյան, նամակ գրեք: Ձեր «Նորքի», Երևանի, գրական անցուղարձի—մի խոսքով ամեն ինչի մասին: Վերահիշյալ խնդրիս մասին չեք մոռանա Հովհաննիսյանի հետ խոսել:

Ընդունեցեք ամենաջերմ բարևներս,

Մոսկվա 922. 1. X.

Ձեր՝ Ե. Չարենց

Հասցես՝ Москва, Армянский пер. № 2. Представительство ССР Арменин.

Е. Чаренц.

Նույնը

N: 2

Սիրելի Մամիկոն Գևորգյան,

Սրանով երրորդ նամակն եմ դրում ձեզ—ոչ մի պատասխան չունեմ։ Ձեմ հասկանում, թե ի՞նչ է նշանակում այս սարոտածը, մի՞թե միայն «Միջագետք»¹⁵ էր մեզ «քիչ մը» մտեմացնողը... Ես ձեզ ուղարկեցի իմ երկու հատորը, ուղարկեցի իմ «Պոեզիոգրոսան», շուտով կուղարկեմ իմ մի նոր պոեմը, որ կոչվում է «Ռոմանս անսեր»¹⁶ և այդ բոլորը ո՛չ մի արժեք չունի՝ միթե ձեր աչքին։ Է, թողնենք, ես էլ կլինեմ պաշտոնական և կխոսեմ «պաշտոնական» բաների մասին։

Հարցը սրանումն է. ես տվել էի «Նորքին» իմ վեպի առաջին մասը¹⁷, ոնե՛. Հովհաննիսյանը եկավ և ինձ հայտնեց, որ I մասը արդեն տպվել է, տվեցի նրան և II մասը¹⁸, որոնց հանդեպ ի հաշիվ իմ ստանալիք հոնորարի ես վերցրի մեկ միլիարդ ութիսկայնական դրամներով։ Սրանով խնդրում եմ, որքան հնարավոր է շուտ, ուղարկեք ինձ վեպիս երկու մասի հոնորարն ամբողջովին՝ հանած իմ ստացածը։ I մասը բռնում էր մինիմում 2 տպագրական թերթ, երկրորդը կրոնի մոտավորապես 3, ընդամենը 5 տպագրական թերթ, որի հանդեպ ես պետք է ստանամ 250 ութիսկայնական դրամով. այս գումարից ահա հանեցեք իմ ստացած գումարը և մնացածը ու՛րա՛ս հնարավոր է շուտ ուղարկեցեք ինձ Միսիայի հասցեով։ Ես մտադրություն ունեմ հունվարի վերջերին գալ Երևան¹⁹, բայց այդ հարցը կախված է հոնորարս ստանալուց, մինչև չստանամ չեմ կարող ճանապարհ ընկնել։ Ուրեմն վերջացնելով նամակիս «գործնական» մասը, խնդրում եմ, որքան հնարավոր է շուտ ուղարկեք իմ հոնորարը, առանց որի ես ոչ հնարավորություն կունենամ ճանապարհ ընկնելու, ոչ էլ շարունակելու վեպս, որի համար պետք է որ «Նորքը» մի փոքր շահագրգռված լինի...

Քանի՞ անգամ ես գրել և հարցրել էի «Նորքին» մասին—և ոչ մի պատասխան. ամեն օր տասնյակ ընկերներ են դալիս Երևանից—կարծես թե դժվար է նրանց հետ մի նամակ ուղարկել։ Խնդրում եմ, սիրելի Մամիկոն Գևորգյան, գրե՛ք, թե ե՞րբ վերջապես լույս պիտի տեսնի մեր «Նորքը»²⁰, որը վախում եմ այնքան ուշանա, որ դառնա աշնանացան... Հետո իմ «Ասպետականը»²¹, ո՛ր համարում պիտի տպվի. Աշոտն ինձ ասում էր, որ I-ում չի լինելու, ուրեմն երկրորդո՞ւմ։ Կարծում եմ, որ գոնե որպես հեղինակ իրավունք ունեմ պաշտոնապես հարցնելու և տեղեկություն պահանջելու սրա մասին, եթե չեք ուզում բարեկամարար գրել։

Մի խոսքով, հույս ունեմ, որ նամակս տեղ հասնելուն պես կուղարկեք ինձ՝ I. մի երկար նամակ-պատասխան, II. հոնորարս, III. «Նորքը», որին «աչքս ջուր կտրավ»²² սպասելով։ Ես, այսպես թե այնպես, մինչև ձեզանից փող ստանալս դեռ այստեղ եմ, այնպես որ շոտանաք ինձ «Նորք» ուղարկելը, կարծում եմ, որ, ինչպես Աշոտն է ասում, մինչև հունվարի մեկը «Նորքը» կստացվի—նու, եթե ոչ մինչև մեկը, գոնե մինչև 15-ը։

Ընդունեցեք հարգանքներս և բարևներս, բարևեցեք Սարյանին, Քալանթարին, Միշա Մանվելյանին²³ և ընկերներին։ Բարևում է կինս։

Ձեր՝ Ե. Չառեհց

P. S.

Սիրելի Մամիկոն Գևորգյան,

Ի՞նչ կա Երևանում, միթե դժվար էր ձեզ Աշոտի հետ մի երկու շիշ կոնյակ ուղարկելը, որն ավելի քան կարող էր հարկավոր դալ էս ցուրտ Մոսկովում: Է, փուշ մարդ եք և փշադույն ընկեր... Այնինչ այստեղ է Կարեն Միքայելյանը²⁴, մենք ամեն օր հանդիպում ենք, հիշում ենք ձեզ ու մասլահաթ անում ձեր մասին. հիշում ենք լավից-վատից, երեսներս ցեխովը չենք տալիս մեր բարեկամների հանդեպ: Կգամ, կիջնեմ մի օր Երևանում—և վա՛յ ձեզ, Մամիկոն Գևորգյան, որ այդպես շուտ եք մոռանում ձեր բարեկամներին: Այստեղ հետաքրքիր է կյանքը, մասնավորապես—թատրոնական կյանքը: Հետաքրքիր են Վախտանգովի և Մեյերխոլդի պաստանովկաները՝ «Принцесса Турандот»²⁵ և «Смерть Тарелкина»²⁶: Մի խոսքով բավականին հետաքրքիր է այստեղ, բավականին նորություններ կան գրական ասպարեզում: Շպենդլերի մասին ևս բավականին գրականություն կա. այնպես որ խոսքս ետ չեմ վերցնում. եթե ուզում եք՝ ցուցակ ուղարկեք, կամ գրեք, ինչպիսի գրքեր որ ուզում եք ուղարկեմ:

Վերստին ընդունեցեք բարեններս

Ձեր Չարենց

Հասցե՝ Москва, Армянск. пер. 9, № 2, Полномочное представительство ССР Армении
Е. Чаренц.

№ 3

Սիրելի Մամիկոն,

Շատ ցավում եմ, որ գալուցս առաջ չկարողացա տեսնվել հետդ և մանավանդ իմանալ կարծիքդ վերջին ժողովածուիս²⁷ մասին: Ինչե՛ք: Դու չկարողացար մոտս գալ, երևի ժամանակ չունեիր, իսկ ևս էլ հիվանդանոցից²⁸ ուղիղ կառք նստեցի և կայարան գնացի: Այստեղ ես հասնելուս պես տեղավորվեցի Զակկրայկոմի կուսակցական տնում²⁹, և սկսեցի բուժվել բժիշկ Իսախանյանի մոտ, որ Զակկրայկոմի բժիշկն է: Հիմա համարյա: ամբողջովին բժշկված եմ, բայց Մոսկվա գնալու ուշացաւ. մի շաբաթ ևս մնալու եմ այստեղ, մի խոսքով մինչև ամսիս 15-ը հանապարհ կրնկենեմ: Ես այն քեզ ցույց տված իմ նյութերից «Ես և Իլլիշը» ավելի «նորքի» N 4-ի համար³⁰: Աշոտը կարդաց և ընդունեց: Հիմա ես ուզում եմ մի անէական փոփոխություն մտցնել նրանում.— հետևյալը՝ պոեմի սկզբից հանել «էյ, դուք, որ գալու եք էգուց» մինչև «դեպի ժամանակը» տողերը, НЕ ВКЛЮЧИТЕЛЬНО, այսինքն՝ բաց թողնել սկզբից այդ տողերը և պոեմն սկսել հիշյալ տողից, որ կլինի.—

Դեպի ժամանակը:

Մկան չկա հոգնած:

Ես էլ,

նա էլ,

դու էլ:

Սղոցում է օդը,

տարիները,

կամքս մեքենա,

միտքս—Ուելս:

և այլն մինչև վերջ:

Սիրելի Մամիկոն, ինձ շատ ցանկալի կլինեն, եթե կարողանայիր մի նամակ ուղարկել մինչև Մոսկվա գնալու: Չեմ հավատում թեկուզ, բայց յարախտ սպասում եմ: Եթե «Նորքի» № 3-ը լույս տեսել է արդեն՝ ուղարկիր մինչև ամսիս 15-ը: Հասցես «Մարտակոչի» խմբագրությունը³¹, ինձ:

Ընդունիր ամենաջերմ բարեններս, շմոռանաւս ինձ,

քո Չարենց

Քիֆուս 923 Շ/IX

Ս. Տ. Խնդրում եմ նայես, որ հիշածս պոեմը ոչ որ չկարդա մինչև լույս տեսնելը. սա քեզ համար ավելի քան կարևոր է:

Չարենց

№ 4

Սիրելի Մամիկոն,

Մի՞թե վիճակված է վերուստ ինձ, թափառականիս, այնպես էլ «անուր» մնալ, այդտեղի կյանքին անհաշորդ, և ո՛վ է, ո՛վ է, ո՛վ է այդ բանում մեղավոր, քան ինքը Մամգուն իշխանը, որից ես մի «ЗАПИСКА» եմ ստացել միայն 9 պունկտից, որոնցից ամեն մեկը մի մեծ նամակի նյութ է, իսկ ամենավերջինը («մի երկար նամակ գրել») — հույս ու ավետում:

Օ, սիրելի Մամգուն, հայտնում եմ քեզ հենց էս գլխից, որ ես, Հայաստանից դուրս գալուս օրից, և ոչ մի նամակ չեմ ստացել որևէ մեկից, և ոչոքի չեմ գրել (ի բաց առյալ քեզ գրած նամակս)։ Հասկանալի թող լինի ուրեմն քեզ, իշխանիդ, թե որքան ուրախություն կարող է պատճառել ինձ, պոետիս, քո գրությունը, որը (a priori կարելի է ասել) այնքան հետաքրքիր բաներ պիտի որ պարունակե իր մեջ: Օ, սիրելի Մամգուն, լսիր թախանձանքներիս և դրիր. գրիր քո մասին, Պետրաստրոնի մասին³², «Նորքի» մասին, գրական անցուղարձի մասին, մի խոսքով — ինչի մասին որ կուզես. — և, վկա էս գրիչըս, որ քո էդ ըզձալի նամակի ամեն մի բառի համար, հազարապատիկը կրվարձատրի քեզ ալլահը, կամ, կուզե՛ս, նույնիսկ ես — նամակներով, գրքերով, ինչով կուզես...

Ամենից առաջ «Նորքը»: Ի՞նչ է անում: Լույս կտեսնի՞, թե ոչ, շատ հետաքրքիր կլինեն իմանալ բովանդակությունը: Հետո — Պետրաստրոնը: Ի՞նչ ծրագիրներ ունի: Գրել էիր, որ ղեկտեմբեր ամսին կխաղացվի իմ «Կապկազը»³³. Հո՞ղս ցնդեց արդյոք, թե ղեռ լույս աշխարհ չի տեսել: Ի՞նչ են անում այդտեղ նաիրյան դրականները. հետաքրքիր է քո կարծիքը մեր արդի գրական իրականության մասին: Այստեղ է ընկ. Կարինյանը³⁴. Նրա ասելով — ամայություն է, մեռյալ կետ, սպիտակ նիրվանա:

Եթե քեզ հետաքրքրում է իմ, նվաստիս, կյանքը, ապա պիտի ասեմ, որ ես երբեք այնքան ամուլ չեմ եղել, որքան հիմա: Չգիտեմ — կրիգի՞ս է, թե վերջ: Ոչ մի հատիկ թեմա, կամ թեմայական մի բան չի պղտորում երևակայությանս ջինջ մաքրությունը, ներողություն — դատարկությունը: Անամպ երկինք է հիմա երևակայությունս, անարեգակ խավար: Պատճառը ես գիտեմ: Կուզե՛ս քեզ էլ կասեմ, բայց ոչ ոքի չասես: Անցյալ ձմեռվա ընթացքում երևանք մի հսկայական գործ կատարեց իմ հոգեկան զարգացման զիգագանման ուղիում. այն է՝ արմատախիլ արեց իմ մեջ այն ամենը, որ նաիրյան էր, ումանտիկ, տե-

ղական: Ոնց որ կավիճով գրված էր էդ բոլորը իմ հոգու տախտակի վրա—և ահա ճակատագրական մի ձեռք օրերի սպունգով սրբեց այդ ամենը մի ձմեռ— ու տեղը թողեց—բաց տարածություն: Շատ ուրախ եմ: Ինձ ավելի քան երեխայացնում էր այդ ոռոմանտիզմը: Շնորհակալ եմ 1923 թվի Երևանից: Բայց բանը նրանումն է, որ վերոհիշյալ «բաց տարածությունը» գեո չի բեղմնավորվել... Եվ կրեղմնավորվի՞ արդյոք, և ինչո՞ւ, և ե՞րբ—անհայտ է ինձ, պոետիս,—բայց մի բան ես գգում եմ, պարզ է ինձ համար. ինչով էլ որ բեղմնավորվի սրանից հետո իմ նաիրյան ոռոմանտիզմից ազատագրված հոգին—բերբր ավելի բարձր, ավելի-ավելի լիբր ու հասուն կլինի, քան առաջվանը. ոռոմանտիզմը, ինչ գույնի էլ նա լինի, մանկական է, երեխայական հասակը բնորոշող, ինչպես կրոնը մարդկային հասարակությունների զարգացման մեջ,—կամ ընդհակառակը՝ ծերության, մայրամուտային գոյավիճակի արգասիք է (որ վերջին հաշվով միևնույնն է. երեխան և ծերուկը քչով են տարբերվում իրարից իրենց հոգեկանում)—ուրեմն, սիրելի Մամգուն, կեցցե կոնկրետ, պոզիտիվ վերաբերմունքը դեպի կյանքը—մի վերաբերմունք, որ լուրջ է, ինչպես հարկ է լինել ամեն մի հասակն առած մարդու—եթե միայն այդ մարդու առողջ է ու կենսունակ և իրեն կապված է գգում վերելքի ճանապարհին գտնվող, հաղթող դասակարգին:

Ասածներիցս պարզ պիտի լինի, թե ինչու ես չեմ կարող շարունակել «Երկիր Նաիրին»³⁵. Նրա ժամանակն անցավ: Ես օրգանապես արդեն հեռու եմ այդ ամենից, և իմ առաջ հիմա, դեռևս մշուշանման, ուրվագծվում է մեր, մարդկային, համամարդկային ալսուժա կոնկրետ կերպարանքը և ապագա կենցաղը (Սավետական կարգեր—ամերիկանիզմ)³⁶—այդտեղ է ահա, որ նոր հյուսիս պիտի գտնի (եթե միայն նրան վիճակված է գտնել)—իմ ստեղծագործական կարողությունը:

Էսպես: Սրանով վերջացնենք: Մոսկվայում ձանձրացել եմ, բայց Հայաստան չեմ ուզում դալ. կուզեի գնալ Եվրոպա³⁷, գնալ Ամերիկա. գոնե աշխուժ հաղորդակից լինել այն կուլտուրային, որի անունն է մաշինիզմ և տեխնիցիզմ—որի մասին այնքան անճարակ երեխայություններ է գրում «Դեմ»³⁹-ը և այնքան հանճարեղ—Ուելսը⁴⁰:

Բայց թողթս վերջացավ: Օ, սիրելի Մամգուն—գրի՛ր: Եթե այս նամակս էլ անպատասխան մնաց—կմնա այս մի տրադիցիան էլ կտրել Երկիր Նաիրիի հետ. չգրել, անգամ մի նաիրցու—և պատասխան չսպասել:

Հասցես, որ շատես թե չգիտեի. Москва, Армянск. пер. 9, № 2. Д. К. С. А. Египше Чаренцу.

Բարեններ ինձանից և Արփիկից

քո՝ Չարենց

Մոսկվա 1924. 8. 11.

№ 5

Սիրելի Մամիկոն,

Ընդունի ետ «Քաջ Նազարը»⁴¹ և ընդունիր մեր խորին շնորհակալությունը: Ներիր, որ մի փոքր ուշացրինք: Հաղիվ արտագրեցին: Ժամանակ ունենաս՝ եկ մի անգամ մասլահաթ անենք: Այլև իմացիր, որ մենք միտք ենք արել մի ան-

զամ խնդրիլ Պետթատրոնին, որպեսզի ուղարկի դերասաններին մի փոքր ներկայացում տալու մեր բեմի վրա⁴²։ Հետաքրքիր էր իմանալ քո կարծիքը այս մասին. հնարավոր է արդյոք, թե ոչ։ Առայժմ այսքանը։

Ողջ լեր ու խնդա

քո՝ Չարենց

926 X/7

Երևան

Տուն ուղղիչ

№ 6

Սիրելի Մամիկոն,

Խնդրում եմ տառ մեր վարիչին⁴³ Պետթատրոնի ունեցած պիեսների կատալոգը, մի օրում մենք ընտրությունը կանենք և կուղարկենք։ Ապա խնդրում եմ հայտնես, թե մոտավորապես ե՞րբ հնարավորություն կունենաք մեզ մոտ ներկայացում տալու։

Բարեններով՝

քո՝ Չարենց

926/X/12

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Չարենցը Երևանից Մոսկվա էր մեկնել 1922 թ. «գոստոսի կեսերին»:
- 2 Այսինքն՝ «Միջագետք» (տե՛ս 15-րդ ծանոթագրությունը):
- 3 Գրական, հասարակական-գիտական և քննադատական «նորք» հանդեսը լույս է տեսել 1922—1928 թթ. Երևանում. ակնարկում է 1 դիրքը, որ լույս է տեսել 1922 թ. դեկտեմբերի սկզբին:
- 4 Պատմարան Աշոտ Հովհաննիսյանն է (ծնվ. 1887). 20-ական թվականներին պետական-կուսակցական գործունեությունը զուգընթաց Պ. Մակինցյանի և Աս. Մոավյանի հետ միասին խմբագրում էր «նորք» հանդեսը:
- 5 Բուլշևիկյան կուսակցության և սովետական պետության գործիչ Ասքանազ Մոավյանն է (1886—1929):
- 6 Չարենցը «նորքի» թղթակից չի ձևակերպվել, «ապա» հանդեսի համարյա բոլոր համարներում պարբերաբար տպագրվել են նրա ինքնուրույն ստեղծագործությունները, կատարած թարգմանություններն ու փոխադրությունները:
- 7 Բանաստեղծ Մոսկվա էր մեկնել կնոջ՝ Արփենիկ Չարենցի հետ (Տեր-Աստվածատրյան, 1899—1927), որն ուսանում էր Մոսկվայի Մանկավարժական-ուսուցչական ինստիտուտում:
- 8 Հայաստանի Սովետական Հանրապետության Ներկայացուցչությունը Մոսկվայում տեղավորված էր Հազարյան ճեմարանի շենքում: 1922 թ. ներկայացուցիչ էր կուսակցական-պետական գործիչ Սահակ Տեո-Գարրիկյանը (1886—1937):
- 9 Աշխարհահռչակ ֆիզիկոս Ալբերտ էյնշտեյնն է (1879—1955):
- 10 Խոսքը վերաբերում է գերմանական իդեալիստ փիլիսոփա Օսվալդ Շպենգլերին (1880—1936): Չարենցի գրադարանում պահպանվել է Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գրքի 1 հատորը (ռուսերեն հրատարակություն՝ 1923 թ., Մոսկվա):
- 11 Այսինքն՝ Սովետական Հայաստանի Ներկայացուցչությունը:
- 12 Խոսքը վերաբերում է «Պոեզիոլոգիա» ժողովածուին:
- 13 1922 թ. Մոսկվայում լույս տեսած Երկերի ժողովածուն է՝ Երկու հատորով: Չարենցի նվիրած այս գրքերը Մ. Գևորգյանը հանձնել է Երևանյան թանգարանին (պահպանվում են Չարենցի ֆոնդում):
- 14 Գրականագետ, քննադատ Տիգրան Հախումյանն է (ծնվ. 1894):
- 15 Չարենցի մասին գրած հուշերում Մ. Գևորգյանը, անդրադառնալով 1922 թ. իրենց փոխհարաբերություններին, գրում է. «Այդ ամառ ամեն օր ժամը 3—4-ին մենք՝ Չարենցը, ես և Երեմյան Տիգրան Հախումյանը, գնում էինք միասին լողանալու Հրազդան գետում: Լողանում էինք սովորաբար «Ամպեր» հիդրոկայանից վերև, այնտեղ, որտեղ հիդրոկայանի առվի և գետի միջև գոյացել էր ժի փոքրիկ կղզի, որը մենք «Միջագետք» էինք անվանել» (տե՛ս «Հիդրոլոգիաներ Եղիշե Չարենցի մասին», Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 260):
- 16 «Ռումանս անսեր» պոեմը լույս է տեսել 1922 թ. դեկտեմբերի վերջերին Մոսկվայում:
- 17 Խոսքը վերաբերում է «Երկիր Նաիրի» վեպի 1 մասին, որ տպագրվել է «նորքի» 1 գրքում (1922 թ.):
- 18 Վեպի 11 մասը Չարենցն ավարտել է 1922 թ. հոկտեմբերին Մոսկվայում. տպագրվել է «նորքի» 11 գրքում (1923 թ.):
- 19 1923 թ. հունվարի վերջերին բանաստեղծը, իսկապես, Մոսկվայից վերադառնում է Երևան:
- 20 Այսինքն հանդեսի 11 դիրքը:
- 21 «Առաքելական» տպագրվել է «նորքի» 11 գրքում (1923 թ.):
- 22 Հովհ. Թումանյանի տողն է՝ «Անուշ» պոեմից:
- 23 Ակնարկում է մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանին (ծնվ. 1880), ու ժխտոր Լևոն Բալանթարին (1882—1959), դերասան-արձակագիր Միքայել Մանվելյանին (1877—1944):
- 24 Ակնարկում է արձակագիր Կարեն Միքայելյանին (1883—1938), որ մշտապես բնակվում էր Մոսկվայում և այդ տարիներին Հայաստանի Կուլտուրայի տան վարիչն էր: Չարենցը նամակագրություն է ունեցել նրա հետ:

25 Իտալական դրամատուրգ Կարլո Գոցցիի (1722—1806) «Տուրանդոտը» ռեժիսյոր Նվգե-
նի Վախտանգովը (1883—1922) բեմադրել է 1922 թ., Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի
Երրորդ ստուդիայում:

26 Ռուս դրամատուրգ Ալ. Սուխով-Կորեյինի (1817—1903) «Տարեկինի մահը» ռեժիս-
յոր Վսեվոլոդ Մեյերխոլդը (1874—1942) բեմադրել է 1922 թ. Թատերական արվեստի պետա-
կան ինստիտուտի թատրոնի բեմում:

27 Ակնարկում է, հավանաբար, «Պոեզիզմը»:

28 Մ. Գևորգյանին ուղղած մի գրություն մեջ Չարենցը բողոքում է ոտքի ցավից, թերևս
դրա համար էլ բուժվում էր հիվանդանոցում:

29 Անդրկովկասի Երկրային կոմիտեի Կուսակցական տունը գտնվում էր Թիֆլիսի Կլարա
Ցետկինի փողոցը վրա:

30 «Ես և Իլյիչը» պոեմը տպագրվել է «Նորքի» IV գրքում (1924 թ.) այն կրճատումնե-
րով, որոնց մասին նամակով խնդրում էր բանաստեղծը:

31 «Մարտակոչը» Անդրկովկասի Երկրային կոմիտեի օրաթերթն էր՝ հայերեն լեզվով.
հրատարակվել է 1922—1927 թթ. Թիֆլիսում:

32 Մ. Գևորգյանը «Նորքի» պատասխանատու քարտուղարն էր, միաժամանակ Երևանի
Պետական թատրոնի (ներկայումս Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական) դիրեկտորը:

33 «Կապկազը» Երևանի պետական թատրոնում չբեմադրվեց:

34 Գրականագետ-քննադատ Արտաշես Կարինյանն է (ծնվ. 1886), իր հանդիպումներին
Չարենցի հետ (1924 թ. Մոսկվայում) Կարինյանը հանգամանորեն անդրադարձել է «Եղիշե
Չարենց» հուշերում (տե՛ս «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Հայպետհրատ, Երևան,
1961, էջ 143—144):

35 Խոսքը վերաբերում է «Երկիր Նաիրի» վեպի III մասին, որ բանաստեղծն ավարտում
է 1924 թ. ոգոստոսին Երևանում. տպագրվել է «Նորքի» V—VI գրքում (1925 թ.):

36 Այսինքն՝ սովետական կարգեր + զարգացած արդյունաբերություն, բարձր տեխնիկա:

37 Չարենցի ցանկությունը իրագործվում է շատ շուտով: 1924 թ. նոյեմբերին նա մեկ-
նում է Եվրոպա, լինում Թուրքիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և հայրե-
նիք վերադառնում 1925 թ. հուլիսին:

38 Ակնարկվում է կոնստրուկտիվիզմը: Գրական ձևապաշտական այդ ուղղությունը X.Ճ
դարի 20-ական թվականներին հետևորդներ է ունենում նաև Ռուսաստանում: 1924 թ. այդ
հետևորդները (Ի. Իլինսկի, Կ. Զելինսկի, Վ. Ինբեր և ուրիշներ) ստեղծում են իրենց «դրա-
կան կենտրոնը», որը գոյատևում է մինչև 1930 թ.: Նույն 1924 թ. էլ լույս է տեսել «Stan-
dart»-ը: Սակայն Չարենցի հրապուրանքը տևում է շատ կարճ՝ մինչև 1924 թ. կեսերը: Արտ.
Կարինյանի վկայությամբ, ամսագրի լույս տեսնելու օրերին արդեն բանաստեղծը նահանջում
էր իր պաշտպանած հայացքներից (տե՛ս «Եղիշե Չարենց» հուշերը, «Հիշողություններ Եղիշե
Չարենցի մասին» գրքում): Պետք է ասել նաև, որ նույնիսկ «Standart»-ի շրջանում Չա-
րենցի գրական հայացքները ամբողջովին ու որոշակիորեն կոնստրուկտիվիստական չէին:

39 Леп-ը հապավում է «Левый фронт» («Ձախ ճակատ») գրական խմբակցության
անունից: Խմբակցությունը սովետական իշխանության առաջին տարիներին հանդես էր գալիս
արվեստի «ձախ» լոգոնգներով, համարում իրեն հեղափոխական նոր գրականության միակ
ստեղծողը: Էպոսն ձևապաշտական հոսանք էր, և Վլ. Մայակովսկին, որ սկզբում գլխավորում
էր խմբակցությունը, հետագայում հրաժարվում է նրա սկզբունքներից: Անառարկելի է նաև
Չարենցի տուրքը Լեֆի որոշ սկզբունքներին՝ 20-ական թվականների առաջին կեսերին:

40 Ակնարկում է անգլիական գրող, ֆանտաստիկ վեպերի հեղինակ Հերբերտ Ուելսին
(1866—1946): Չարենցը տարված էր Ուելսով դեռևս 1923 թ., Ուելսի «Ժամանակի մեքենան»
վեպի ազդեցությամբ էր գրել «Ես և Իլյիչը» պոեմը: Ուելսի ֆանտաստիկայի, ապագա «մեքե-
նայացված» մարդկային կյանքի պաշտպանությունը որոշակի տեղ ունի բանաստեղծի այդ
շրջանի գրական սկզբունքների շարքում:

41 Ուղղիչ տունն ուներ կուլտ-բաժին, որի թատերական խումբը կալանավորների համար
կազմակերպում էր ներկայացումներ՝ հայերեն, ադրբեջաներեն և ուսներեն լեզուներով: Չա-
րենցը Ուղղիչ տանն եղած ամիսներին (1926 թ. սեպտեմբերից—1927 թ. փետրվարը) բնակվել
էր, այսպես կոչված, կուլտ-կոմիտեայի նախագահ և գլխավորում էր կուլտուրական աշխա-
տանքները: Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարը» այդ ժամանակամիջոցում, հավանաբար, չի ներ-

կայացվել: Ներկայացվել են բազմաթիվ այլ պիեսներ, այդ թվում ևլ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման, «Նամուսը» և այլն: Ուղղիչ տան թատերական կյանքին Չարենցը անդրադառնում է «Նրեանի ուղղիչ տնից» նոթերի մի շարք գլուխներում:

42 Ուղղիչ տունն ուներ հատուկ թատերասրահ (տե՛ս «Նրեանի ուղղիչ տնից», գլուխ V):

43 Հավանաբար ակնարկում է Ուղղիչ տան կուլտ-րամի վարիչին, որ Չարենցի նոթերում բազմիցս հիշատակվում է իր եռանդուն աշխատանքով, երբեմն և կենսագրական տվյալներով. «...առաջ կայարանի բջջի քարտուղարն էր եղել»:

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ ЕГИШЕ ЧАРЕНЦА

А. Г. ЗАКАРЯН

(Р е з ю м е)

Публикуемые письма Егише Чаренца относятся к 1922—1926 гг. Это был период творческих исканий поэта на путях к новому, социалистическому искусству. После «Декларации трех» и до «Standart»-а творчество Чаренца характерно известной приверженностью к «левым» лозунгам и некоторой данью конструктивизму. Литературные взгляды поэта в определенной степени нашли свое отражение и в публикуемых письмах, адресованных его другу, одному из известных деятелей армянской культуры, Мамикону Геворкяну (1879—1962). Письма освещают некоторые интересные стороны и факты биографии поэта и творческой истории его произведений этих лет («Страна Наирн», «Я и Ильич», «Из ереванского исправдома» и др.).